Կ Ա Ր Ծ Ի Ք
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Վանո Լևոնի Ղազազյանի «Ներդրումների արդյունավետության գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով, ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Ներդրումների արդյունավետության հիմնավոր գնահատումը միշտ էլ գտնվել է տնտեսագետների ուշադրության կենտրոնում և համարվել է տեսամեթոդաբանական հիմնախնդիր, որը դեռևս լուծումների է սպասում տնտեսավարման ներկա ժամանակահատվածում: Ներդրումային գործընթացում պահանջվում է ֆինանսատնտեսական ռեսուրսների ընդգրկում, ընդ որում ոչ միայն հայրենական, այլև օտարերկրյա աղբյուրներից, որով անհրաժեշտություն է ծագում ոչ միայն տնտեսապես գնահատելու ներդրումային ծրագրերի նպատակահարմարությունը, այլև դրանց փաստացի հատույցի ձևավորման արդյունավետությունը:

Ժամանակակից մոտեցմամբ՝ ներդրումների իրականացման արդյունավետությունը չի դիտարկվում ներդրողի զուտ տնտեսական տեսանկյունից, այլ այն դուրս է գալիս նեղ շահերի շրջանակից և պետության կողմից գնահատվում է տնտեսական անվտանգության ապահովման, կապիտալի միգրացիոն տեղաշարժերի, տարածաշրջանային զարգացման խթանման, նորարարությունների ներդրման խրախուսման առումով:

Կարևոր հիմնախնդիրներից է նաև ներդրումային ծրագրերի բնապահպանական հետևանքների գնահատումը և դրանցից բխող սոցիալ-տնտեսական վնասների կանխարգելումն ու հատուցումը: Առաջնորդվելով զուտ տնտեսական շահերով, ներդրողները չեն մոտիվացվում բնօգտագործման գործունեության ոլորտում, որն էլ հանգեցնում է բնապահպանական աղետների: Այս առումով, անհրաժեշտություն է ծագում ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման շրջանակում ներառելու նաև բնապահպանական գործունեության շրջանակը, որով առավել ընդգրկուն են դառնում ներդրումային հատույցների մեկնաբանումները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներդրումների տնտեսական արդյունավետության համապարփակ գնահատման հիմնախնդիրների քննարկումները և լուծման ուղիների առաջադրումները տեղ են գտել ինչպես արտասահմանցի տեսաբանների, այնպես էլ հայազգի հետազոտողների աշխատություններում: Սակայն, ներդրումների մուլտիպլիկացիոն հատույցի ինտեգրալային գնահատման, ներդրումային ծրագրերի արդյունավետության համակողմանի կառավարման կատարելագործման հիմնախնդիրները դեռևս իրենց խորքային լուծումները չեն ստացել նրանց հետազոտություններում, որն էլ կանխորոշել է ատենախոսության թեմատիկ ուղղվածությունը և կատարված հետազոտության նպատակադրումները:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է՝ ներկայացնել ՀՀ տնտեսությունում իրականացվող ներդրումների արդյունավետության գնահատման բարելավման ուղիները, որոնք կնպաստեն ներդրումային ծրագրերի հատույցի չափման, տնտեսավարման տարբեր մակարդակներում համախմբման և վերլուծության գործառույթների բարելավմանը և ներդրումների գծով հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը:

Ելնելով հետազոտության նպատակից, հեղինակի կողմից ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- բացահայտել ՀՀ տնտեսական համակարգում ներդրումների ակտիվությանը խոչընդոտող պատճառահետևանքային կապերը և ներկայացնել առաջարկություններ՝ ներդրումային ծրագրերի իրագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ,
- մշակել ներդրումների արդյունավետության գնահատման ինտեգրալային ցուցանիշ, հիմնվելով ներդրումային ծրագրերին առնչվող շահառուների պահանջմունքների բավարարման փաստացի աստիճանի վրա, և դրանով իսկ հնարավորություն ստեղծել ներդրումների հատույցի վրա ազդող բազմաբնույթ գործոնային վերլուծության համար,
- մշակել ներդրումների ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման արդյունավետության գնահատման ցուցանիշ, հաշվի առնելով ներդրումային ծրագրերի իրագործման ռեսուրսների բազմազանությունը և իրականացնել ներդրումների ֆինանսավորման արդյունավետության փոփոխման գործոնային վերլուծություն՝ բացահայտելով յուրաքանչյուր ռեսուրսային աղբյուրի ազդեցությունը ֆինանսավորման արժեքի փոփոխման վրա:
- մշակել ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային դրույթներ, հնարավորություն ընձեռելով համալիր մոտեցմամբ արժևորելու ներդրումային ծրագրերի արդյունքները միկրո և մակրոտնտեսական մակարդակներում, դրանով նպաստելով շահառուների պահանջմունքներին ուղղված կառավարչական որոշումների կայացմանը:

Հետազոտությունում ուսումնասիրության օբյեկտը և առարկան

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպությունների կողմից իրականացվող ներդրումային գործընթացն է, իրեն բնորոշ գործառույթներով:

Հետազոտության առարկան ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային շրջանակն է:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ներդրումային քաղաքականության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան

հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները: Ատենախոսությունում օգտագործվել են ներդրումային գործընթացի զարգացմանը վերաբերող հաշվետվական տվյալներ, ՀՀ վիճակագրական և ուսումնասիրման բնագավառին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական աբստրակցիայի, ֆինանսատնտեսական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրագործման գծով փորձագիտական ուսումնասիրությունների եղանակներ:

Հետազոտությունում ստացված արդյունքները և գիտական նորույթը

Ատենախոսության հիմնական գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջարկություններ են մշակվել հետևյալ ուղղություններով.

- ՀՀ-ում առկա ներդրումային գրավչության աստիճանի գնահատումների հիման վրա բացահայտվել են ներդրումների ակտիվությանը խոչընդոտող պատճառահետևանքային կապերը և դրանց հիման վրա կատարվել են առաջարկություններ՝ ներդրումային ծրագրերի իրագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ,
- մշակվել է ներդրումների արդյունավետության գնահատման ինտեգրալային ցուցանիշ, հիմք ընդունելով ինչպես ներդրումային ծրագրերին առնչվող շահառուների պահանջմունքների բավարարման փաստացի աստիճանը, այնպես էլ ներդրումների հատույցի վրա բազմաբնույթ գործոնների ազդեցությունը,
- մշակվել է ներդրումների ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման արդյունավետության գնահատման ցուցանիշ, որով թիրախավորվում են ներդրումային ծրագրերի իրագործման նպատակահարմար ռեսուրսները և իրականացվում է ներդրումների ֆինանսավորման արդյունավետության փոփոխման գործոնային վերլուծություն՝ բացահայտելով յուրաքանչյուր ռեսուրսային աղբյուրի ազդեցությունը ֆինանսավորման արժեքի փոփոխման վրա:
- մշակվել են ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային դրույթներ, որոնք հնարավորություն են ընձեռնում համալիր մոտեցմամբ արժևորելու ներդրումային ծրագրերի արդյունքները միկրո և մակրոտնտեսական մակարդակներում՝ նպաստելով շահառուների պահանջմունքներին ուղղված կառավարչական որոշումների կայացմանը:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ՀՀ կազմակերպություններում վարվող ներդրումային քաղաքականության զարգացման գծով տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված ներդրումային գործընթացի արդյունավետության բարելավման հայեցակարգային ուղիների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ-ում իրականացվող ներդրումային քաղաքականությունում՝ նպաստելով կազմակերպությունների ներդրումային գործառույթների բարելավմանը, ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատմանը, ներդրումների ոլորտում կառավարչական որոշումների բարելավմանը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն ընդգրկում է գծապատկեր և 17 աղյուսակ: Ատենախոսությունը շարադրված է 120 էջի վրա առանց հավելվածների:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ներկայացվել է գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, տեսական և տեղեկատվական հիմքերը, փորձարկումներն ու հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Ներդրումային գործընթացի ակտիվությունը ՀՀ տնտեսական համակարգում» գլխում, ներկայացված են ՀՀ տնտեսությունում ներդրումային գործառույթները, բացահայտված են Հայաստանի հանրապետությունում ներդրումային գրավչության ապահովման և ներդրումների օրենսդրական խթանման հիմնախնդիրները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ներդրումների արդյունավետության դրսևորման առանձնահատկությունները տնտեսավարման արդի պայմաններում» գլխում, ներկայացված են ներդրումների դասակարգման մոտեցումները տնտեսավարման համատեքստում և ներդրումային ակտիվության դրսևորումները կապիտալի միգրացիայի համատեքստում, պարզաբանված են ներդրումների ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ համակցման հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ «Ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային հիմնախնդիրները» գլխում, ներկայացված են ներդրումների արդյունավետության գնահատման մեթոդաբանական մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում, տրված են ներդրումների արդյունավետության չափման և արժևորման բարելավման ուղիները, ինչպես նաև ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային շրջանակի բարելավամն ուղիները:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ատենախոսը ներկայացրել է հետազոտությունից բխող առաջարկությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Հետազոտությունը հիմնված է ծավալուն նյութի ուսումնասիրության վրա, կատարված է բազմակողմանի վերլուծություն: Այդուհանդերձ, աշխատանքը զերծ չէ նաև որոշ **թերություններից և բացթողումներից**, որոնցից հիմնականներն են.

1. Աշխատանքը կշահեր, եթե նրանում համեմատական վերլուծության ենթարկվեին ՀՀ-ում վերջին տարիներին կատարված ուղղակի և անուղղակի ներդրումների չափերն ու դրանց սոցիալ-տնտեսական արդյունքները: Այս ուղղությամբ ատենախոսի կողմից ընդամենը ներկայացվել են որոշակի թվային տվյալներ:

2. Ատենախոսությունը կարիք ունի 2019-2020 թվականների արդյունքներին վերաբերող վիճակագրական տվյալների համալրման, որոշ աղյուսակներում և գծապատկերներում տեղեկատվությունը ներկայացված է 2018 թվականի արդյունքներով, մինչդեռ արդեն առկա են նաև 2019 թվականի տվյալները: Ասվածը կարևորվում է, մանավանդ, որ 2019 թվականը համարվում է ՀՀ-ում հետհեղափոխական ժամանակաշրջանի առաջին լիարժեք տարին և ստացված տվյալների ուսումնասիրությունը, դրանց համադրությունը կարող էր բնութագրական լինել հետհեղափոխական ժամանակահատվածում արձանագրված ներդրումային քաղաքականության որոշ արդյունքների վերաբերյալ:

3. Ատենախոսության 1.3 բաժինը, որը վերաբերում է ներդրումների վերաբերյալ օրենսդրական լուծումների հիմնահարցերին, իր հետագա զարգացումը չի ստանում ատենախոսությունում, ուստի կարծում ենք, որ այդ բաժնի որոշ դրույթների հիման վրա կատարված ամփոփումները պետք է տեղ գտնեին ատենախոսության Եզրակացություններ բաժնում:

4. Ներդրումների արդյունավետության գնահատման հիմքում ատենախոսը դրել է ներդրումային ծրագրերից ակնկալվող սոցիալ-տնտեսական սպասումների և դրանց փաստացի կատարողականի միջև ձևավորվող շեղումները: Սակայն, դրան զուգահեռ, ընդամենը հպանցիկ անդրադարձ է կատարվել, թե ինչպես հաշվարկել ներդրումներից ակնկալվող սոցիալ-տնտեսական սպասումները: Կարծում ենք, որ ատենախոսությունը կշահեր, եթե նրանում խորքային մեկնաբանությունների ենթարկվեր ներդրումային գործընթացներից ակնկալվող արդյունքների չափման մեթոդաբանությունը:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նշված դիտողությունները, սակայն, չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները:

Վանո Լևոնի Ղազազյանի Ներդրումների արդյունավետության գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում հետազոտությունն ինքնուրույն աշխատանք է: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված են և ընդունելի: Ատենախոսությունում ներկայացված

առաջարկությունները կիրառելու դեպքում դրանք կարող են ակնհայտ դրական ազդեցություն ունենալ ՀՀ-ում ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների արդյունավետության բարձրավման վրա, ինչպես նաև այդ ոլորտի կարգավորման գործիքակազմի ընդլայնման և բարելավման համար:

Լինելով ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, ատենախոսությունը հագեցած է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն ունեցող նյութերով: Ատենախոսությունում ստացված տեսական և գործնական բնույթի եզրահանգումները և առաջարկվող լուծումները կարող են օգտագործվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատանքներում, ինչպես նաև ՀՀ-ում ներդրումային գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ և ընկալելի ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակած 7 (յոթ) գիտական աշխատանքում:

Վանո Լևոնի Ղազազյանի «Ներդրումների արդյունավետության գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի Նորարարության
տնտեսագիտության ամբիոնի վարիչ **Ա.Խ.ՄԱՐԿՈՍՅԱՆ**

Պրոֆեսոր Ա.Խ.Մարկոսյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ.

ԵՊՀ գիտական քարտուղար,
պատմ.գիտ.թեկնածու **Լ.Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ**

29 հունիսի 2020թ.